

Կառավարում /ըստ ոլորտի/ բակալավրի մասնագիտության կրթական ծրագրի վերջնարդյունքները 2021-2023թթ.

1.	Ընդհանրական		Մասնագիտական
Ը 1	<p>Մասնագիտական գործունեության շրջանակներում խոսքը պետական /հայերեն/ և օտար /ռուսերեն և անգլերեն/ լեզուներով բանավոր, գրագետ արտահայտելու, մեկնաբանումներ իրականացնելու, գրավոր ներկայացնելու կարողություններ</p>	Մ 1	<p>Տնտեսության հիմքում ընկած օրենքների և օրինաչափությունների, տնտեսական զարգացման պատմության փուլերի պատճառահետևանքային շղթաների ու շարժիչ ուժերի, ազգային և միջազգային տնտեսական հարաբերությունների, մենեջմենթի, մարքեթինգի, տնտեսական սոցիոլոգիայի, աշխատանքի տնտեսագիտության, տեսական հիմնադրույթների պատկերացում, ներկայացման, նկարագրման կարողություններ</p>
Ը 2	<p>Տեղեկատվության տարատեսակ աղբյուրներից /համացանց, դասագիրք, ձեռնարկ, հոդված, ատենախոսություն, գիտական հետազոտություն և գրականություն, հայրենական և միջազգային կազմակերպությունների, պետական գերատեսչական մարմինների հաշվետվություններ, որոշումներ և այլն/ ինքնուրույն բնագիտական և հասարակագիտական տարբեր գիտելիքներ, ինֆորմացիա հավաքելու, վերլուծելու, մեկնաբանելու, պահպանելու կարողություններ</p>	Մ 2	<p>Մասնագիտական գործունեության մեջ մաթեմատիկական, հավանականային, վիճակագրական, մարքեթինգային մեթոդներով հետազոտությունների, վերլուծությունների հիմնադրույթների պատկերացումներ և գիտելիքները տնտեսագիտական վերլուծություններում կիրառելու կարողություններ</p>
Ը 3	<p>Որոշակի փաստարկների հիմնավորման և եզրահանգումների նպատակով՝ տնտեսագիտական, վիճակագրական, ակադեմիական տեղեկատվությունը ժամանակակից տեղեկատվական միջոցների օգնությամբ հավաքագրելու, արդյունքները պահպանելու և ներկայացնելու տեխնոլոգիական կարողություններ</p>	Մ 3	<p>Ֆինանսադրամական հարաբերությունների, համակարգերի, ոլորտների ու բնագավառների, օղակների, գործառույթների, ազգային արդյունքի բաշխման ու վերաբաշխման մեխանիզմների, քաղաքականությունների հիմնադրույթների վերաբերյալ տնտեսագիտական պատկերացումների ձևավորում, տիրապետում և իմացություն</p>
Ը 4	<p>Գործարար էթիկայի, վարքի բարոյական նորմերի, ինքնակազմակերպման և ինքնակրթման, անձնական տեսակետը ճիշտ պաշտպանելու գիտակցմամբ՝ արդյունավետ հաղորդակցության, ապագա աշխատավայրում հարմարվելու և թիմային</p>	Մ 4	<p>Պետական, մասնավոր ոլորտների կառավարման, առանձնահատկությունների, սկզբունքների, ռազմավարական, անձնակազմի, միջազգային բիզնեսի, ներդրումների, նորարարության, հակաճգնաժամային, հարկային քաղաքականության և կառավարման, կազմակերպչական վարքագծի հիմնադրույթների պատկերացումների</p>

	աշխատանքների մասնակցության, ղեկավարման կարողություններ		ձևավորում
Ը 5	Գործարար քննարկումների, բանակցությունների, ասուլիսների, կլոր սեղանների, բանավեճերի պայմաններում՝ միտքը (մասնագիտական) հռետորական, մասնագիտական համոզիչ խոսքով, հիմնավորված, տրամաբանված հաջորդականությամբ ներկայացնելու, բանավեճեր վարելու, գիտագործնական քննարկումներին բովանդակային մասնակցության կարողություններ	Մ 5	Ազգային տնտեսության կազմի, կառուցվածքի, անվտանգության, մրցունակության, քաղաքականությունների, միկրո-, մակրո-տնտեսական գործընթացների, առանձնահատկությունների, բնութագրիչների վերլուծության, գնահատման, համադրման կարողություններ
Ը 6	Կարևորելով սեփական պահանջումները հետագա ուսումնառության կամ աշխատանքի ուղիները որոշելու կարողություններ	Մ 6	Բիզնեսի, միջազգային բիզնեսի հիմնադրույթների, էության և բովանդակության, հիմնական եզրույթների, բիզնես համակարգի, շահերի համադրման օրինաչափությունների, կանոնակարգման, բիզնես միջավայրի մեկնաբանման, բիզնես շահերի գնահատման կարողություններ
Ը 7	Անձնական իրավունքների և պարտականությունների ընկալմամբ՝ ազգի և պետության հանդեպ պատասխանատվության գիտակցում	Մ 7	Շրջակա միջավայրի, աշխատանքային ռեսուրսների հիմնական հասկացությունների տիրապետում, ռեսուրսներով ապահովվածության գիտակցում և կարևորում, ռեսուրսների բաշխման, օգտագործման, պետական բնապահպանական կարգավորման հիմնախնդիրների մեկնաբանման և տարբեր հանրությունների ներկայացման հմտություններ
		Մ 8	Պետական և մասնավոր հատվածում կառավարման ռազմավարության մշակման, նպատակների և խնդիրների, ներքին և արտաքին գործոնների հստակեցման, ռազմավարության գործիքներ ընտրելու և կիրառելու, ոչ ստանդարտ իրավիճակներում որոշումների կայացման հմտություններ
		Մ 9	Մարքեթինգի գործիքակազմի տիրապետում, մարքեթինգային հետազոտությունների հիմնադրույթների պատկերացումներ, մարքեթինգի ռազմավարական պլանավորման մոտեցումների, միջազգային փորձի տեղայնացման հմտություններ

		Մ10	Հաշվապահական հաշվառման հիմնադրույթների, միջազգային ստանդարտների, տնտեսական գործառնությունները փաստաթղթավորելու և հաշվապահորեն ձևակերպելու, հաշվառման հմտություններ, հաշվետվությունները ընկալելու կարողություններ
		Մ 11	Գործավարության կազմակերպման, գործարարության համար անհրաժեշտ տեխնիկատնտեսական հաշվարկների գոյություն ունեցող մոտեցումների, ռեսուրսների արդյունավետ օգտագործման, գործունեության ֆինանսական, պլանավորման, կառավարման վերլուծական մեթոդների տիրապետում և մասնագիտական և ոչ մասնագիտական հանրությանը ներկայացնելու կարողություններ
		Մ12	Բանկային գործնեության, հիմնարար սկզբունքների, գործունեությունը կարգավորող հիմնական օրենսդրական դաշտի, մատուցվող ծառայությունների բովանդակային տարբերակման, գործառնությունների հաշվառման, հաշվետվությունների ընկալման, ներկայացման կարողություններ
		Մ13	Միջազգային տնտեսական հարաբերությունների, համաշխարհային տնտեսության, միջազգային բիզնեսի կառավարման հիմնադրույթների տիրապետմամբ՝ տնտեսական զարգացումների միջազգային գործընթացների ընկալում, համապատասխան փորձի տեղայնացման պատկերացում
		Մ 14	Տեղեկատվական տեխնոլոգիաների համակարգերը օգտագործելու, դրանց միջոցով մասնագիտական տեղեկատվությունը ներկայացնելու, ամբողջացնելու, վերլուծելու, պահպանելու և հրապարակային ներկայացնելու կարողություններ
		Մ 15	Մասնագիտական գործունեության մեջ էկոնոմետրիկ, մոդելավորման մեթոդների միջոցով հետազոտությունների, վերլուծությունների հիմնադրույթների պատկերացումներ և գիտելիքները տնտեսագիտական վերլուծություններում կիրառելու կարողություններ
		Մ16	Հարկային քաղաքականության և կառավարման, ներդրումների, նորարարության կառավարման սկզբունքների, մոտեցումների, հիմնական

			բնութագրիչների տիրապետմամբ՝ հարկային ոլորտի, ներդրումների տվյալներ հավաքագրելու, մշակելու, վերլուծելու և մեկնաբանելու հմտություններ՝ հիմնավորված դատողություններ անելու համար:
		Մ17	Տնտեսության սոցիալտնտեսական զարգացման, կառավարման, կազմակերպությունների արդյունավետ գործունեության ապահովման և կառավարման հիմնախնդիրների շրջանակներում համաժամանակյա, տարաժամանակյա, ապաժամանակյա կտրվածքներով, թե՛ մասնագիտական, թե՛ հարակից միջմասնագիտական գիտակարգերի շրջանակներում հետազոտական աշխատանք կատարելու կարողություններ
		Մ 18	Ձեռք բերված գիտելիքների գործնական կիրառության կարողություն, պրակտիկ աշխատանքային հմտությունների առկայություն, ծագած խնդիրներին լուծում գտնելու, ինքնուրույն մասնագիտական գործունեություն ծավալելու կարողություններ